

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳԱԻՍԹԵԲԱՌԵՐԵՐ¹⁾

Բ. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՅԼԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.

Ակ կամ ակն. — Վ., գնմոների տակից խողովակաձև բացուած ճանապարհ, որտեղից թռնիրն օդ է ստանում վառուելու համար:

Աղուէս. — Վ., երկրագործական սայլի կոտոշի և ծայրերի մէջ անցկացրած կանգնաչափ երկայն ու բազկաչափ հաստ փայտն է, որ գլորսից թղաչափ բարձր է. սայլի բեռը կը ելուց յետոյ մանիչքի մէկ ծայրը թղղնում են գլորսի ծակի մէջ, իսկ միւս ծայրը կոթնեցնում են աղուէս փայտին, որ բեռքաշ չվանը չքակուի:

Աղուր. — Վ., սայլի ճանապարհ:

Առեղ. — Վ. Մշ., սայլի երկու կողի փայտերն են, որոնց վերայ կազմում են սայլի թամբը, սայլի կազմուածքը:

Առեղախպէր. — Վ., երեք կանգուն երկայնութեամբ և 2 քիլ շրջապատով երկու հաստ փայտեր են, հաստատուած սայլի առեղների երկայնութեան աակ բռնցիցներով՝ կոտրատուելուց պահպանելու համար:

Բռնցից. — Վ., 1. սայլի առեղախպէր փայտերի 2 ծայրերին առեղների վերայ մեխուող ցիցեր: 2. Նշյնպէս կատաւագործի մի ցից է, գետնին զարնուած, որից ջուլհակը կապում է իւր խորապարանը:

Գլեռս կամ գլորս. — Վ., 1. գերանաչափ հաստ կլոր փայտ է, որ պարկեցնելով գետնին, նորա վրայից բաշում են գլուարակիր ծանր գերան, ծառ, ջրաղացաքար և ուրիշ ծանր բաներ՝ դիւրաւ սահեցնելու համար: 2.

1) Տես «Հռումայ» 1898 թ. գիրք Ա.

Ճառճպի սոնակ, որի վերայ շարում են երկաթի տամներ:

Գործաւոր.—վ., արօրի ծայրի ցից, որ անց է կացրած կանարիւ փայտէ ողակի մէջ։
Երկմատ, երկու մատէն։—մշ., երկմատնեայ հեծանոց է, որով խուրձ են բարձրացնում սայլի կամ դէզի վերայ։
Թամբ.—վ., 1. երկրագործական սեռնի վերայ դրուած կազմուածք է, որի վերայ բեռն է դրւում։ 2. Սրի պատեան։

Թրացեց.—վ., 4 կանգուն երկայնութեամբ ձողաձև 2 փայտ, որոնց անկում են երկր սայլի ետևի կողմը, վերի երկու ծայրերն իրար կապած։

Լակոտ.—վ., 1. 2 կանգուն երկայն և 2 քիլ շրջապատ հասա 2 փայտ է, սայլի առեղախպօր երկայնութեան տակ հասատուած, ինչպէս որ առեղախպէրը առեղան տակն է։ 2. Լարանի ծայրին կցուած թել։

Կշտափաշ.—վ., սայլի բեռը կողերի կողմից կապող չուան։ Կուտոշ կամ կոտոշ.—վ., սայլի առջևի կողմը անկուած 3 կանգուն բարձրութեամբ զուգահեռական 2 փայտեր, որոնց ծայրից 3 քիլ ցած երկուսի մէջ առջը անց են կացնում գլորս փայտը։

Կունտ.—վ., 1. ջրաղացի անիւի կունտ, որի վերայ հասատառած են փառերը։ 2. սայլի և գութանի անիւների կունտ, որի մէջ պատում է սեռնի ծայրը։

Ճամասոխ.—վ., սայլի տակը ի կախ հաստառած 4 ցից, որոնց մէջ դառնում է սոնակը։

Ճամբարակ.—մշ., 1. բարակ փոկերից հիւսուած բազկաչափ հաստ կաշեկապ է, որ գութանի էշն ու խարազնը կապում է միմեանց հետ։ 2. Ըստ վանեցւոց՝ սայլն ու իր լուծն իրար կապող թղաչափ լայն և մէկ կանգուն երկայն զօլ կաշի է։

Մանիչք.—վ., կանգնաչաչափ երկայն և բազկաչափ հաստ երկու փայտ է, որոնցով կըում են երկրագործական սայլի բեռբաշ չուանը։

Մառան.—վ., տախտակաձև փայտերով բոլորչի կազմուած գութանի կամ սայլի անիւ, անուի շրջանակի միջի տախտակը։

ՄՃՐԱՅ. — Վ., սայլի տախտակամածի երեք տեղն է, սանտ-
րերի մէջ՝ վերևից ու ներքևից միմեանց վերայ մե-
խուած տափարակ փայտերը, որոնք արգելում են
տախտակամածի ճօճալը:

Զարուխ. — Վ., ձեռքի ափի ձեռվ և երկար պոչով երկաթ
է, որի ափը հագցնում են սայլի տեղի վերայ, պո-
չերը երկու կողմից ցած կախուած և մառանի վերայ
մեխուած՝ տեղովը մառանի վրայից դուրս չգալու համար:

Սանտր. — Վ., 1. սայլի մէկ առեղից միւսը երկայ-
նացրած և նոցա վերայ հաստատուած երեք փայտեր,
որոնց կողերը բթաշափ խորութեամբ փորուած է՝ սայ-
լի տախտակամածի ծայրերը նոցա մէջ անցնելու հա-
մար: 2. Զուլհակի սանտր, որ կազմուած է երկու
հատ կանգնաշափ երկայն և մատնաշափ հաստ փայ-
տերից: այս երկուսի մէջ շարուած է ասեղի հաստու-
թեան չափ եղեգնի կտորներ խիտ առ խիտ, իւրաքան-
չիւրի միջից հինածի մէկ մէկ թել անցկացրած:

Վուան. — Վ., երկու փայտերի միջնավայրում զարնուելիք
փայտ կքելու համար, կամ սայլի և գութանի անիւ-
ները սեռնի վերայ հաստատելու կքելու փինչ (թալաշ):

Տէօլ. — Վ., գութանի կամ սայլի անիւի երկաթէ շրջանակը:

Փաշ. — Վ., երկր. սայլի բեռը կապելու ճոպան, որի երկու
ծայրերը կապուած են առեղների պոչից: միջի օղն էլ
ձգում են գլորսի պաեղի ծայրին բեռը կապելու ժա-
մանակ:

Գ. ԿԱԼԻ ԵՒ ԻԻՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱՆԱ:

Աշան. — Վ., կասելու համար կամասայլի ներքեւ պարզուած
օրան:

Բնատայ. — Վ. 1. կալուայ ցոռուկ կապելու կամ դունչն
անցնելու փայտէ օղակ: 2. գութանի շղթայ:

Գլորս. — Վ. (աես սայլի վեր. բացատրութիւններ):

Եղբական. — Վ. կամասայլին լծուած դրսի կողմի եղն:

Էրան. — Վ. հոսող բամի, որ կասպուրականի կողմերը ամա-
ռը ցերեկին արևմաքից է փչում շարունակ, իսկ գի-
շերն արևելքից:

Էլոնիմ. — Վ., հոսել:

Թեղ — Վ., կասուած օրանի տեղն է:

Թեղեմ. — Վ., կասուած օրանը դիզել:

Թուր. — Վ., (առաջին նշանակութիւնը տես «գութանի» և այլն վեր, բացատրութիւններում). 2. երկրագործական սայլի առեղների իրար հետ միացած գլուխները միմանց հետ վիզող (մեխող) թրածև փայտ:

Խայան. — Վ., նոյն օրուայ կասուած օրան:

Խղուզ կամ խղիւզ. — Վ., կալի մացորդ (քէօզար):

Կալատեղ. — Վ. կամասայլ բաշողների առջեկից պարապ շըրջող կալոտէր, որոնք միայն ոտքով են կալսում:

Կալէմաղ. — Վ., կալի մաղ, յարդը արմաիբից ջոկող մաղ:

Կամ կամ. հաստ տախտակի ներքև կայծահան բարեր են ամրացնում, որոնցով կասում է կալը:

Ճառճառ. — Վ., կամասայլ, որի երկու սեռնի վերայ հաստափուած են շատ ուրագներ կասելու համար, կամ գործիբից բոլորովին տալինը. սորա վերայ նստարան կայ, ուր նստում է եզնավար հօտաղը. իսկ կամի վերայ կանգնում է:

Շօրական կամ շորակն. — Վ., կալօտի այն եզներն են, որոնք կալի ներսի կողմը թեղի շուրջն են պատում թէ կամասայլ բաշողները և թէ կալատեղները:

Վղտայ. — Վ., կալատեղներն իրար հետ կապող չուան:

Փոկէմաղ. — Վ., փոկից շինուած արմտեաց մաղ:

Քաղլոր. — Վ., բաղող հնձող:

Քաշան. — Վ., մի փայտ է, որի մէկ ծայրը կտպուած է ճառճառին և միւսը լծան՝ ճառճառը բաշելու համար: Քառէշառ. — Վ. (սովորաբար քառամատանեայ է լինում)՝ հեծանոց:

Քարմաղ. — Վ., բարերը արմաիբից զատող մաղ, որի ծառ կերը կալէմաղից մանր են:

Դ. ԱՆԴԱՍՑԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.

Աւկնիկ. — ?

Աշաբայ. — Վ. աշնան ցանուած:

Աշնցան. — Վ., աշնանացան:

Առձնկան կամ գանձակ (գանձար). — Վ., արտի գործ դը լուսնը Բ.

բոււած երկու ակօսների մէջ տեղ անվար մնացած մասը, որ երկու խակընթաց (աջ ու ձախ) ակօսների հողով է ծածկուում։ Գանձակում ասում են խարիակ։ Արտախլիս. — Աշ., Պժանսյ. — Վ., քաղաքիք արտի լրանալու օրը, երբ սարակներին (վարձկաններին) լաւ կերակուր է արւում և ուրախանում են այդ օրը։

Աւետիկ. — Վ., Աանի ամենապատուական և ատոք ցորենն է, հատերի գոյնը նուազ կարմիր, դեռահաս եղած ժամանակ՝ նորա ցօղունը և հասկը կարմրում է, իսկ լաւ հասնելուց յետոյ՝ սպիտակում։

Բարտ. — Աշ., երեսուն խուրձ։

Բարտոց. — Աշ., երեսուն խուրձ միատեղ դիզուած։

Գարնցան. — Վ., գարնան ժամանակի ցանած։

Գլխաւոր կամ ջրբեր. — Վ., արտի վրայի կամ գլխաւոր առուն, որտեղից ջուր է բաժանուում կորիններին։

Եղայ. — Վ., տհաս արմտի։

Լզառ, լզառակ. — Վ., արտի երկու կողմից վարածներն իրար հասած ու խառնուած տեղ, առուի պէս խոր ընկած դիծ։

Խաճառ. — Վ., սպիտակահասա ցորեն։

Խոռամ. — Աշ., 1. փաթթուած խոռ. 2. Մշեցիք խոռամ կամ հոռամը մէկ խուրձ են կապում։

Խոռոմ, խուռոմ. — Վ., փաթթուած խոռ առանց կապելու։

Կակղան. — Վ., 1. մէկ երկու անգամ վարած, կակղացած արտ։ 2. անոսկը միս, մսի կտոր։

Կծղած, կծղել. — Վ., վականած, — նել, արմտիբների հասնելուց յետոյ չորանալը, ատոքահատների սմբիլը։ Կծղած արմտիբների հացը վատուժ ու անհամ է լինում։

Կորդ. — Գանձակի ն. վարելու տափի չվարած կողմը։

Կորի. — Աշ., ջրարբի արտը մասների բաժանող առուն՝ դիւրաւ ջրուելու համար։

Կռէթ. — Վ., հողակոշա։

Կտրոն. — Վ., կորտութիւնից ելած, մի տարի առաջ վարած ու բաղած արտը միւս տարի կտրոն է։

Հօնած, հէօնած. — Վ., արտ բաղող սարակների գլխաւոր։

Հօնած ախպէր. — Վ., հէօնածի ընկեր, աջակից։

Ճաւ, ճեաւ. — Վ., Խոտի կամ արմտիքի ցողուններից շինուած կապ (խրցան) կեմ:

Միջնառուն. — Վ., արտ բազող սարակները թէև մէկ կարգ են լինում, բայց երեք մասնակարգ կամ տուն են առում. հէօնած միջնառուն և պոչատ: Հէօնածը՝ սարակներից առաջին կարգի բաջ գործունեաներին կարգում է հէօնածի տանը, երկրորդ կարգի գործունեանեաներին պոչատի տանը, իսկ ծոյլերին՝ միջնառանը, որպէս զի երկու կողմի բաջագործների մէջ ակամայից գործելով յետ չմնան:

Մունկ. — Վ., մանր յարդ, որ հոսելու ժամանակ բամու հետ գնում ցրւում է:

Մրիկ. — Վ., հասկի մէջ սկացած ատոք:

Ուռթ. — Վ., ջրի գէմ բռնելու թումբ:

Զրբեր. — (տես «գլխաւոր»):

Զրկալ. — Վ., { արտ ջրող:

Անարք. — Վ., առընթեր եղած արտերը միմեանցից բաժանող սահմանագիծ:

Սոր. — Վ., ասւում է գերանդիով բազուած խոտի կամ օրանի երկար թումբի պէս իրար վերայ պարկելը (ծովի ալիքների նման):

Փոցղ, փոձխ. — Մշ. մանկեռի նման, բայց նորանից փոքր՝ բազմամատն գործիք, որով ժողովում են հնձած ցորենը:

Քիս. — Վ., չքաղուած արմտիքի հասկերի վերայի բարակ ծղոտ:

Ե. ԶԻԹՀԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

Արջ կամ առջ. — Վ., 2 գիրկ հաստութեամբ և 2 կանգուն երկայնութեասք մէջաեղը ծակ մի փայտ է, որի մէջ ոլորւում է ձիթահանի պօղօսակը. արջը շղթաներով կապուած է բամող գերանի երկաղի ծայրերի վերայ:

Բուլառուն. — Վ., ձիթահանի հնոցի վարի սալայատակն է, որ շրջապատուած է թղաչափ բարձր թումբերսվ, որի մէջ բոկում են կտաւատը, որից ձէթ պիտի բամեն:

Դլիկ. — Վ., երեք բիլ երկայն և բազկաչափ հաստ երկալ,

որ ձիթահանի քառակի բարը շրջեցնող նետի ծայրը գոռանիկը գամում է քառակի սեան գլխի վրայ:

Լաշ. — Վ., ձիթահանի քամող գերանի ներքև շարուած զամբիւղների վերայ դրուած կոճղի վերայ դրուելիք 2—3 հին զամբիւղներ, որոնցով գերանը հաւասարակշռութեան մէջ են պահում:

Կիլաղ. — ?

Անձակ. — Վ., ձիթահանի մթխլի բարի վերայ հաստատուած Յ լծաչափ փայտեր, որին լծուում է պօղոսակ շրջեցնող գոմեցը:

Առկան ծակեր. — Վ., ձիթահանի արջ փայտի Յ գլխի ծակեր, որոնց մէջ փայտի փինչ վարսելով արջը հաստատում է քամող գերանի ծայրերի վերայ:

Ճօճք. — Վ., երկու հասա սիւն, որոնք տնկուած են քամող գերանի երկու կողմերը ծայրերը առաստաղից դուրս ելած, որպէս զի գերանը այս ու այն կողմը չշարժուի:

Մթխլի կամ բեռ. բար. — Վ., $2\frac{1}{2}$ կանգուն երկայն և 1 կանգուն հասա բոլորչի բար, որ կախում են ձիթահանի պօղոսակի ներքեւի ծայրից:

Նետ. — Վ., 1. բնագերան — երկան գերան, որի վերայ դրուում է փոքր գերանների մէկ ծայրը: 2. ձիթահանի նետը ն կանգուն երկայն Յ բիլ շրջապատով հասա փայտ է, որի մէկ ծայրը քառակի բարի ծակի միջից անցնելով միևուած է քառակի սեան վերայ. միւս ծայրը բարը շրջեցնող գոմեցի ետևից բաշանով կապուած է լծան ծայրին:

Պորտ. — Վ., ձիթահանի քամող գերանի տակ միջնավայր աեղը գետին տնկուած մի կոճղ է, որի վերայ դնում են նախ փոխնդով լի զամբիւղներ և քամող գերանն իջեցնելով վրէն՝ տափակացնում են, որ բողազի տակ փոխադրելու ժամանակ զամբիւղները հեշտութեամբ միեանց վերայ կանգնեն:

Պօղոսակ. — Վ., ոլորուն մանկէն է, որի ներքեւի ծայրից կախուած է մթխլի բարը. այս պօղոսակը ոլորելով ձիթահանի քամող (Ճմլող) գերանը բարձրանում է և իջնում, որովհետեւ ոլորուում է արջ փայտի փորի մէջ:

Սեղանարս. — Վ., ձիթահանի քամող գերանի ներքև շարուած

զամբիւղների տակի քարը, որի վերայ իջնում է քամուած ձեթը և այնտեղից լցւում կարասի մէջ։
Վիշտ։ — Վ. միկ թիզ երկայնութեամբ և բազկաչափ հաստ
երկաթ, որ պօղոսակի տակ հաստատուած է ինչպէս
նորա ոտը։

Փիւղայ. — Վ. 1. գաճաճ, թզուկ։ 2. ձիթահանի վրձին, ո-
րով սրբում են փոխնդի մաղի ծակոտիթը։

Փոխինդ. — Վ. ձիթահանի մէջ խարկուած կտաւանդը երբ
քառակի քարի նեղքեւ մանրուում է՝ փոխինդ է կոչւում։

Փոխնդատուն. — Վ., ձիթահանի մէջ մի քառակուսի փոս է,
որի մէջ մաղում են փոխինդ եղած կտաւատը։

Քառակ. — Վ., ձիթահանի այն բոլորչի սալայտակն է, որի
մէջ լցնում են բոված կտաւատը և վրէն քառակի քարը
շրջեցնելով՝ փոխինդ է դառնում։

Քաշան. — Վ., քաշող մի չուան է, որ քառակի քարը շրջե-
ցնող գոմեշի լուծն ու նետը կապում է իրար հետ։

Քառակի սուն. — Վ., քառակի մէջ անկուած $1\frac{1}{2}$ երկայն
և 2 թիզ հաստ սիւն, որի գլխի վերայ ամրացած է
քառակի քարը շրջեցնող նետի ծայրը։

Քառակի քար. — Վ., 3 կանգուն քարձր, 1 կանգուն հաստ。
բոլորչի քար է, որի 2 երեսը 2 քիլ երկայն և լայն
և 5 մատ խորութեամբ մի փորուածք ունի քառփիզակ-
ներ զետեղելու։ այս քարը բոված կտաւատի վերայ
շրջեցնելով՝ փոխինդ է դարձնում։

Քառփիզակ. — Վ., 2 քիլ երկայն և լայն, 5 մատ հաստ
մի քառակուսի փայտ, որ կապ ունի քառակի քարի քա-
ռակուսի ծակի մէջ և լծակը նորա մէջ հաստատելով
շրջեցնում են քարը։

